Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17276

1902

37
U-94

2010

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Մարաղայի Հայոց

«ԱՐՈՒՍԵԱՆ»

Արմանական ֆոնդի․
հիմնուած է 1902-ի
Նոյեմբերի 10-ին․

Մարաղայում։

37
Զ-94

1902
ԹԱՒՐԻԶ

Տպարան Թաւրիզի Հայոց Արամեան Դպրոցի

2001

37
Ա-94
370
1986-ԿԱ
8762
1004
159602

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Մարաղայի Հայոց

„ԱՐՈՐԴԱՆ"

Կրթական Ֆոնդի

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Общественная Библиотека
7/XI. 1922
Ս. Ա. Ն. Ա. Ն. Ի. Ա. Ն. Ի. Ա. Ն. Ի

վիճակախաղերից ստացուած տոկոսները, բարերարներից պարբերաբար ստացուող տարեկան վճարները, քաղաքից հեռացող բոլոր հայազգիներից ստացուող «սալամաթի» կոչուած տուրք-նուէրը, աշակերտուհիներից ստացուած տարեկան թոշակներն և զանազան նուիրատուութիւններ։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

1 «ԱՐՈՒՍԵԱՆ» Ֆոնդի բոլոր գործերի ընդհանուր ղեկավարն է վարչութիւնը, որ կազմւում է հետեւեալ հինգ անդամներից՝ Նախագահ, Գանձապահ, Քարտուղար և երկու խորհրդականներ իրենց անձնափոխանորդներով, որոնք այն ժամանակն են միայն ձայն ունենում վարչական նիստերում երբ վարչութեան բուն անդամներից մէկն ու մէկը կամ բացակայ է քաղաքից և կամ հրաժարուած է իր պաշտօնից։

2. Վարչութիւնն ընտրւում է տեղական հայ ազգաբնակութեան ընդհանուր ժողովից (որ հրաւիրւում է քաղաքիս հոգեւոր հովւի կողմից) երեք տարի ժամանակով և իբրև լիազօր մարմին կառավարում է ֆոնդի բոլոր գործերը։

3. Վարչութեան ԱՌԱՋԻՆ ՊԱՐՏ ԽՆԱՄՈՒԹԻՒՆՆ է բոլոր ստացուած գումարների մի քառորդ մասը պահել իբրև անձեռնմխելի մայր գումար

յաջողութիւն և կայունութիւն «ԱՐՈՒՍԵԱՆ» ֆոնդի և «Խալաֆեան» դպրոցի։

4. Իւրաքանչիւր տարի ֆոնդի հիմնւելուն տարեդարձի օրը, Նոյեմբերի 10—ին, վարչութիւնը պիտի տայ մի երեկոյթ, որի ժամանակ պիտի ներկայացնի ներկայ եղող հասարակութեան ֆոնդի միամեայ բարոյական ու տնտեսական գործունէութեան մանրամասն հաշիւը։ Նոյն հաշիւը վարչութիւնը պիտի հրատարակի թէ հայ թերթերում և թէ առանձին բրօշիւրներով ի գիտութիւն հայ հասարակութեան։

5. Վարչութիւնըս պարտաւոր է իւրաքանչիւր նուիրատուի տալ յատկապէս այդ նպատակով տպագրուած ընկալագիր նախագահի և գանձապահի ստորագրութեամբ և ֆոնդի կնիքով վաւերացրած։

6. Վարչութիւնն իրաւունք ունի ֆոնդիս համար աչքի ընկնող ծառայութիւն մատուցանողներին ու ֆոնդիս բարերարներին ընտրել պատուաւոր կամ հովանաւորող անդամ։

7։ Վարչութիւնը պարտաւոր է իւրաքանչիւր, նոյնիսկ ամենաչնչին համարուած, վճիռ անմիջապէս արձանագրել այդ նպատակին յատկացրած տետրակում և վաւերացնել նիստին ներկայ եղող անդամների ստորագրութեամբ։ Այն վճիռների գործա-

դրութիւնը, որոնք նախապէս արձանագրուած և վաւերացրած չեն, համարւում են անվաւեր և դատապարտելի:

8. Վարչական ժողովը վաւերական է համարւում, երբ ներկայ են լինում վարչական անդամներից երեքը. իսկ բացակայ եղող անդամներն իրաւունք չ'ունին կրկին հարց բարձրացնել իրենց բացակայութեան միջոցին կայացած և արձանագրուած վճիռների մասին:

9. Վարչական նիստերի դռնբաց կամ դռնփակ լինելը կախուած է վարչութեան բացարձակ կամքից:

10. Վարչութեանը եղած բոլոր առաջարկութիւնները, թէ վարչական անդամների և թէ կողմնակի անձանց կողմից, պիտի լինի միշտ գրաւոր: Այդ առաջարկութիւնները խնամքով պիտի պահուին ֆօնդի արխիւի մէջ:

11. Ֆօնդի արխիւը յանձնւում է վարչութեան քարտուղարին, իսկ դրամը — գանձապահին. սակայն ոչ քարտուղարն իրաւունք ունի առանց վարչութեան որոշման ոչինչ գրելու և ոչ գանձապահը փող ծախսելու: Վերջինս իր մօտ պահելու իրաւունք ունի միայն քսանուհինգ թուման, իսկ մնացած դրամը պիտի տոկոսով տրուի:

12. Կանոնագրութեանս հակառակ գործած իւրաքանչիւր գործի համար վարչութիւնը պատասխանատու է հասարակութեան:

ԿՆԻՔ.

„ԱՐՈՒՍԵԱՆ" ֆօնդն ունի իր կնիքը հետևեալ մակագրութեամբ՝ „Արուսեան ֆօնդ. 1902 Նոյ. 10—ին, Մարաղա":

ԽԱՓԱՆՈՒՄՆ.

Եթէ երբ և իցէ ֆօնդը դադարելու լինի գործելուց, նորա ամբողջ կայքը Ատրպատականի Հայոց առաջնորդարանի կամ նորա Ներկայացուցչի ձեռքով պիտի յանձնուի Մարաղայի Հայոց „Խալաֆեան" դպրոցին:

ՅԱՒԵԼՈՒԱԾ.

„ԱՐՈՒՍԵԱՆ" Ֆօնդի հիմնուիլը.

„Խալաֆեան" օրիորդաց դպրոցի փակուած և Մարաղացի հայ օրիորդների կրթական գործի երեսի վերայ թողնուած լինելը վաղուց մտահոգութիւն էր պատճառում կրթասէր ազնիւ մարդկանց, որոնց սրտին մօտիկ ու նուիրական էր հայ աղջկայ կրթութեան Ս. գործը, սակայն գործողների և միջոցների պակասութեան շնորհիւ այդ ցաւալի դրութիւնը դեռ շարունակւում էր:

Հարկաւոր էր վերաբանալ յիշեալ դպրոցը: Միջոցներ պակասում էին. Ներկայ Հոկտեմբերի

26 — ին պ. Միհրան Բաղդասարեանի առաջարկութեամբ որոշուեցաւ, նախկին սովորութեան համեմատ, քաղաքիցս հեռացող ազգայիններից „սալամաթի“ ստանալ և ժամանակի ընթացքում ի մի գումարել այդ նուէրները աշխատելով վերաբանալ „Խ ա լ ա ֆ ե ա ն“ դպրոցը։

Սակայն այդ փոքրիկ միջոցը մի կաթիլ էր կարիքի ովկիանոսի մէջ և չէր կարող հասցնել ցանկալի նպատակին։ Մի դէպք, որ անակնկալ էր ու մխիթարական, եկաւ այդ մեծ պակասը լցնելու։

Ներկայ թուականի նոյեմբերի 10-ին, շնորհիւ օր. Երուսեակ Խնկոյեանի արտաքոյ կարգի եռանդի, դրական գործունէութեան և առաջիկայում նոյն եռանդուն գործունէութիւնը շարունակելու խոստման, խորտակուեցան գործել ցանկացողների խոչընդոտները և կարիք զգացուեցաւ այդ դժուարին գործն առաջ տանելու համար հիմնել մի որոշ ու կազմակերպուած մարմին, որ առաջ տանէր այդ նուիրական և անհրաժեշտ գործը։

Այդպիսով հիմնուեցաւ ներկայ Ֆօնդը, որ նոյն պարոնի առաջարկութեամբ և ընդհանուր համաձայնութեամբ օր. Երուսեակ Խնկոյեանի անուամբ կոչուեցաւ „ԵՐՈՒՍԵԱԿ“, որպէսզի դորանով վարձատրուած լինի օրիորդի անգնահատե-

լի գործունէութիւնը, որ իւր տեսակի մէջ առաջին դէպքն էր պարսկահայերի կեանքում և որ վերջ դնելով երկարատե մեռելութեանը՝ դուրս հանեց գործել ցանկացողներին իրենց նեղ ու անորոշ դրութիւնից և թարմութիւն մտցրեց մեր հասարակական լճացած ու փթած կեանքի մէջ։

Այնուհետև նոյեմբերի 24-ին ընտրուեցաւ վարչութիւն, իսկ Ֆօնդի հիմնադիր օր. Երուսեակ Խնկոյեանին տրուեցաւ առաջին պատուաւոր անդամուհու տիտղոսը։

Մարաղայի մռայլ երկնքի վրայ վերջապէս փայլեց մի աստղ, որի տակ անգործունէութիւնը հալածուեցաւ և նորան յաջորդեց բուռն, եռանդուն գործունէութիւն։

Սոյն վարչութիւնս դիմում է բոլոր ձեռնհաս անձանց և խնդրում է չխնայել իրենց օգնութիւնը այդ ազգօգուտ և նուիրական գործին, ի նկատի ունենալով որ իւրաքանչիւր բարեգործութիւն կըհասնի իր օգտակար նպատակին և արժանաւորապէս կըգնահատուի երախտագէտ վարչութեանս կողմից։

Մեր ձեռնարկութեան մէջ մեզ օգնել ցանկացողներից խնդրւում է ի նկատի ունենալ, որ բացի դրամից կարող են նուիրել նոյնպէս դասագրքեր, գրքեր, զանազան դասական առարկաներ, կանացի հագուստի պարագաներ և այլ յարմար համարուած

առարկաներ։

Նուէրները խնդրւում է ուղարկել հետեւեալ հասցեով՝

Fonds „Aroussian“

Maragha (Perse)

կամ

„Առուսեան Ֆոնդ“

Մարաղա (Պարսկաստան)

Վարչութիւն

Նախագահ՝ Փարէզ Ենովքբեան
Գանձապահ՝ Մելքոն Խալաֆեան
Քարտուղար՝ Երո. Նազարեան
Խորհրդական՝ Միհրան Պաղդասարեան
Խորհրդական՝ Ե. Թամրազեան

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI - 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2[illegible] 1902

Մարաղա.

Ծանօթ. Երբ Ֆոնդի միջոցները ներեն, բացի Մարաղայից, նա նպատակ ունի նոյն ուղղութեամբ գործելու ՊԱՐՍԿԱԿԱՆ ՔՐԴԻՍՏԱՆԻ հայերի մէջ։

2013